

մէջ: Անասասի այս ցուցակագրութենէն առաջ, Զ. դարու կիսուն արդէն տեղի ունեցած էին Երուսաղեմի մէջ կրօնական խլրտումներ, քաղկեդոնական դէպքեր, որ վրդովեցին հայ վանականութեան հանդարտիկ կեանքը եւ քանի մը վանքեր ալ գրաւուեցան կամ հրդեհուեցան: Վանօրէից Յուցակին եւ Երուսաղեմի Յովհաննէս պատրիարքին՝ Աղուանից Աբաս կաթողիկոսին ուղղեալ նամակին մէջ կը կարդանք քէ «Հայոց իշխանները գրաւուած վանքերը՝ քէ արանց եւ քէ կանանց, ազատելու համար Յուսիմիանոս կայսեր Եօրը կենսինար, այսինքն 70,000 ոսկի դահեկան տուին եւ սիրացան անոնց. Հայոց իշխանները այդ դէպքերուն ժամանակ կը պաշտպանէին վանքերը ու կը բողոքէին հոռոմ պատրիարքին ոտքնձգութիւններուն դէմ, այդ պատճառաւ պատրիարքը Աբասի կը գրէ քէ Հայոց իշխանները «զԿեսարիա կալան բարուրս». այդ պատճառաւ իբր պատասխան կ'ըսէ անոնց քէ՝ «Կեսարիան հաճոյ է ձեզ, երթայք ի Կեսարիան կացեք եւ այլն». նամակին մէջ յայտնապէս գրուած է քէ Հայոց վանքերէն մին հրդեհուած է. հոռոմ պատրիարքն եր հրդեհել տուողը: Հետեւեալ դէպքն ալ ցուցակագրութենէն յառաջ պէտք է նկատենք. Հոռոմները՝ մասնաւորապէս Յուսիմիանոսի երկդիմի քաղաքականութենէն քաջալերուած, կը բռնազատէին որ Երուսաղեմի հայ վանականները ընդունէին Քաղկեդոնի Ժողովը եւ յաւանական դաւանութիւնը. հայ վանականները կ'ընդդիմանային եւ ստիպուեցան դիմել Յովհաննէս Գաբելեան կաթողիկոսին (557-574). «Եւ միայրան ժողովեալ տանուայն հարկն եւ առաջնորդ մնեսասնացն եւ խորհրքառոր միայնակեացն, անձինք իբրեւ հինգ հարիւր, գրեցին առ երանելի կաթողիկոսն Յոնան եւ առ այլ արքունիքսն. ետք զի՞նչ պարս իցե տունել, հաւանիչ լոցս եւ ունիչ գտելի բնակութեան իրեանց, եւ քէ՝ քողոզ եւ եղանել անտի, զի հրանան քազառորին իսասնայր ի վերայ արքոյ քաղաքին եւ հայրապետացն զի մի բնակեացին անոր ի Հայոց կրօնառորաց եւ Յակոբիկ ատորի կամ չեգիսսացոցն, այլ միայն որք ողջ ունին զհաւասս քազառորին եւ զՅորնաղի սահնակաորութիւնն»: Կաթողիկոսը կը պատասխանէ քէ հաւաստի մասին մի՛ հնազանդիք անոնց, բողոքեք վանքերը եւ դուրս ելեք այդ վանքերէն: Այս հրամանին վրայ շատերը դուրս ելան իրենց վանքերը եւ գոյները բողոքով, իսկ շատերն ալ դուրս չելան քաղաքէն ու համբերեցին հոռոմ պատրիարքներուն տուած նեղութիւններուն եւ աւարտութեանց, մինչեւ որ իսլամ-